



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

76

2

L-85

my. 26

2010

ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՑ

Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԴԱՍ ՀԵԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ



ԻԹԻՆՈՒՍԻԱ.

Իսպարսկի Խաչիպեան Ուսումնարանի Հայոց

—
1861.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Ս Տ ՈՒ Ա Մ Ա Շ ՈՒ Ն Չ Ս ՈՒՐ Բ Գ Ր Ո Ց



Գ Ա Ս Հ Ն Գ Ե Տ Ա Ս Ս Ն Ե Ր ՈՐ Գ .



րամայեց Մովսէս ժողովրդեան որ բանակինն վերցը-
նեն՝ ճամբայ ելնեն Սինա լեռան քովէն մինչեւ երեք
օրուան տեղ երթալու: Տապանակը քահանաները
լծակներով իրենց ուսերուն վրայ վերուցած՝ բանակին առջեւէն
կերթային, Մովսէս եւ Ահարոն երգերով աղօթքներով անոր ե-
տեւէն, ամպն ալ շուք կընէր ժողովրդեան վրայ առաւօտէն
մինչեւ իրիկուն:

Բայց ժողովուրդը այն աղէկուածեան յարգն ալ չճանչցաւ.
սկսաւ չարաչար գանգատիլ ու տոճոհիալ Աստուծոյ դէմ. Աս-
տուած ալ բարկացաւ Իսրայելացւոց վրայ, վկայութեան խորա-
նէն կրակ ելաւ ու բանակին մէկ մասը այրեց լափեց. այնպէս
որ Մովսէս ժողովրդեան աղաչանքովն ու աղօթքով հազիւ դադ-
րեցուց այն սոսկալի պատիժը. տեղւոյն անունն ալ դրաւ
Հրայրեաց:

Երբոր նորէն տեղ մը իջան բանակեցան, ժողովուրդը նորէն սկսաւ լալ ու գանգատիլ՝ ըսելով թէ «Ո՞ւր էր թէ միս լինէր՝ ուտէինք. ի՞նչպէս կարօտցանք եգիպտոսի, ուր որ ձուկը կուտէինք ձրի ձրի, նմանապէս սեխ, ձմերուկ, պրաս (փրասս), սոխն ու սխտորը. իսկ այս տեղ հոգինիս բերաննիս եկեր է, աչքերնիս ալ մանանայէն ուրիշ բան չտեսներ. — Ո՞ տացէ մեզ միս ուտելոյ. զի յիշեցաք զձուկնն զոր ուտէաք յեգիպտոս ձրի, եւ զսեխն եւ զձմերուկապոպ, եւ զպրասն եւ զսոխն եւ զսխտոր. եւ արդ՝ աւասիկ նքողեալ են անձինք մեր, եւ ոչ ուրեք՝ բայց միայն իմանանայն են աչք մեր»: Նայեցաւ տեսաւ Մովսէս որ ամէն մարդ իւր վրանին դիմացը նստած՝ այս լաց ու գանգատները կընէ խումբ խումբ. սիրտը կտրտեցաւ ու նեղացաւ. դարձաւ ըսաւ Աստուծոյ թէ «Տէր, այս ի՞նչ բան է որ գլխուս բերիւր. ահա այսքան բազմութիւն ելեր են ինձմէ այժմ ալ միս կուզեն որ ուտեն. ես միսը ուսկի՞ց գտնեմ այսչափ ժողովրդեան համար: Մի՞թէ ե՞ս ծներ եմ ասոնք որ այս կերպով սոցա ամէն հոգն ու խնամքը իմ վրաս մնայ. ահա չորս կողմս առեր կուլան ու մեզի միս տուր որ ուտեմք կըսեն: Թէ որ զիս կսիրես, թէ որ շնորհքդ ու ողորմութիւնդ վրաս է, գոնէ թեթեւցուր վրայէս այս անտանելի ծանրութիւնը. ապա թէ ոչ, դիմանալու բան չէ»:

Աստուած պատասխան տուաւ Մովսիսի թէ «Իսրայելացոց ծերերուն ու պատուաւորներուն մէջէն եօթանասուն հոգի ընտրէ ու վկայութեան խորանը բեր. ես քու հոգիէդ մաս մը կառնում կուտամ նոցա, որ օգնեն քեզի այդ ժողովրդեան տուած նեղութիւններուն դիմանալու: Ժողովրդեան ալ ըսէ որ պատրաստուին վաղուան օրը միս ուտելու. եւ գիտնան որ ոչ մէկ օր պիտի լինի իրենց միս ուտելը, ոչ երկու, ոչ հինգ, ոչ տասը եւ ոչ քսան, հապա ամիսներով պիտի ուտեն՝ մինչեւ որ քթերնէն բերաններնէն գայ. — Մինչեւ ելանիցէ ընդ ռնգունս ձեր. — վասն զի այդ իրենց լալն ու զմեզ ինչո՞ւ եգիպտոսէն հանեցիր ըսելը՝ ինձի դէմ ապստամբութիւն ու մեծ ապերախտութիւն է»:

Մովսէս զարմանալով մը հարցուց Աստուծոյ թէ «Սոքա վեցհարիւր հազար կտրի՞մ մարդիկ են, թող մնացած բազմութիւնը.

ո՞րքան միս պիտի տրուի որ բաւէ իրենց, որչափ կով ու ոչ-
խար որ կայ՝ թէ որ մորթուի, ծովուն մէջի ձկներն ալ բոլոր
ժողովուին, մի՛թէ կարելի՞ է ամիսներով միս կերցընել սոցա ու
կշտացընել: Աստուած հասկըցուց Մովսիսի թէ իրեն համար
անկարելի բան չկայ: Մովսէս ալ ելաւ պատմեց ժողովորդեան
Աստուծոյ պատգամները:

Յետոյ ժողովորդեան ծերերէն եօթանասուն հոգի ընտրեց ու
խորանին չորս կողմը կեցուց: Աստուած իջաւ ամպով, ինչպէս
որ կըսէ սուրբ գիրքը, Մովսէսի հետ խօսեցաւ, ու անոր հո-
գիէն առաւ նոցա ալ տուաւ. այսինքն այնպէս ըրաւ որ հաս-
կընան թէ Մովսէս միշտ վեր է ամենէն մարգարէական հոգ-
ւովը՝ իբրեւ գլխաւոր աղբիւր եւ շտեմարան շնորհաց: Իսկոյն
այն ծերերն ալ սկսան մարգարէանալ, այսինքն օրհնել եւ փա-
ռաբանել զԱստուած մարգարէական հոգւով:

Այն ծերերէն երկու հոգի, մէկուն անունը ելզադ, մէկաւինը
Մովզադ, բանակին մէջ մնացեր էին. նոքա ալ այն տեղ
սկսան մարգարէանալ: Յետո՛ւ նաւեայ Մովսէսի սպասաւորը՝ այս
որ լսեց, վախցաւ որ չլինի թէ իւր տիրոջը պատիւը անով վար
իյնայ. քովը գնաց, «Տէր Մովսէս, մի՛ թողուր որ նոքա մար-
գարէանան, ըսաւ. — Տէր Մովսէս, արգել զնոսա»: Բայց Մով-
սէս այն մեծերէն չէր որ իրենցմէ պզտիկներուն վրայ կնա-
խանձին ցածուծեամբ, ու կարծեն թէ ո՞ր բանն որ իրենց ան-
միջական կառավարութեամբը կամ իրենց անունովը չլինիր՝
գէշ է, ծուռ է, արգիլելու է: Դարձաւ պատասխան տուաւ
Յետուայ թէ «Զուր է քու խօսքդ, որով իբր թէ իմ նախանձս
կուզես շարժել նոցա դէմ. երանի՛ թէ բոլոր այս Աստուծոյ ժո-
ղովուրդն ալ մարգարէ դառնար. — Մի՛ արկաներ դու ինձ
նախանձուկս. եւ ո՞ տայր զամենայն ժողովուրդս Տեառն մար-
գարէս»:

Անկէց ետքը ծովուն կողմէն սաստիկ քամի մը ելաւ, անոր
հետ անթիւ անհամար բազմութեամբ լորամարգի (պըլլորճին)
թռչունը եկաւ իջաւ բանակին չորս դին, ամէն դիէն մինչեւ
մէկ օրուան համբայ, գետնէն ալ մինչեւ երկու կանգուն իրա-
րու վրայ դիզուած: Ելաւ ժողովուրդը, երկու օր մէկ գիշեր

ժողովեց այն լորամարգին. ամենէն քիչ ժողովողը տասը բոռ (քիւէ), մորթեցին ու չորցուցին ապուխտ ըրին բանակին չորս կողմը: Բայց կերենայ թէ Աստուծոյ շնորհակալ լինելն ալ մոռցան՝ իրենց ծակաչքուծեանէն. կամ թէ իրենց տժգոհութեանն ու անիրաւ գանգատներուն պատիժը պէտք էր քաշէին. մինչդեռ միսը ազահաբար ժողվելու եւ ուտելու հետ էին, — «Մինչդեռ միսն յատամունս նոցա էր՝ յառաջ քան զպակասելըն» — Աստուած իւր բարկութիւնը յայտնեց նոցա վրան, ու սոսկալի ջարդ մը ընկաւ մէջերնին. — Եւ եհար Տէր զժողովուրդըն հարուածս մեծամեծս յոյժ»: Այն տեղւոյն անունը դրուեցաւ Գերեզման քցանկութեան:

Մովսեսի պաշտօնին ծանրութիւնը թէպէտեւ քիչ մը թեթեւցաւ վրայէն՝ այն եօթանասուն ծերերուն օգնականութեամբը, բայց ժողովրդեան գանգատներն ու տժգոհանքը դարձեալ ատեն ատեն կաւելնար, եւ Մովսեսի բարի սրտին նեղութիւն կուտար: Այն տժգոհութեանց մէջ աւելի ալ ծանր եկաւ Մովսեսի իւր ընտանեաց մէջ պատահած գժտութիւնը՝ կնոջը պատճառաւ:

Մովսեսին կինը Սեպփովրան այլազգի՝ այսինքն Մարիանացի էր, թէպէտ եւ Հրէից աստուածաշտուութեանը դարձած: Սա կերեւնայ թէ իւր չափը մոռնալով՝ կպարծենար կանացի թեթեւամտութեամբ ուրիշներուն առջեւը՝ իւր ամուսնոյն Մովսեսի ունեցած մեծամեծ շնորհքներուն ու մարգարէական հոգւոյն վրայ: Մարիամ՝ Մովսեսի քոյրը եւ Ահարոն եղբայրը չդիմացան անոր պարծենկոտութեանը. իրենց հարսին պակասութեանը նայելով՝ մոռցան իրենց եղբօրը պատիւը. սկսան ըսել իրարու եւ ուրիշներուն որ «Միթէ Աստուած միայն Մովսեսի՞ հետ խօսեր է. ո՞չ ապաքէն մեզի հետ ալ խօսեցաւ. ուրեմն մեք ինչո՞վ պակաս եմք իրմէ»: Լսեց Մովսէս այս բամբասանքը, ու փոյթ չըրաւ ամենեւին. վասն զի «Իրեն պէս հեզաբարոյ մարդ աշխարհիս երեսը չկար. — Եւ այրն Մովսէս հեզ էր յոյժ քան զամենայն մարդիկ որ էին իվերայ երկրի» կըսէ սուրբ գիրքը: Սակայն Աստուած իւր հաւատարիմ ծառային պատիւը պաշտպանեց. երեքին ալ հրամայեց որ վկայութեան խորանը գան: Ամպղղէն սիւնը իջաւ խորանին դուռը կեցաւ, ու անոր մէջէն

Ահարոն ու Մարիամ ներս կանչուեցան: Ըսաւ Աստուած՝ նոցա
Թէ «նայեցէք ի՛նչ կըսեմ ձեզի. — Լուարուք բանից իմոց. — Թէ
որ ձեր մէջը մարգարէ մը գտնուի, ես անոր տեսիլքով կերեւ-
նամ ու երագին մէջ կխօսիմ հետը: Բայց Մովսէս իմ հաւատա-
րիմ ծառաս այնպիսի մարգարէներէն չէ. ես նորա հետ բերան
իբերան կխօսիմ, եւ ոչ Թէ մուծ կերպով ու օրինակներով, եւ
իմ փառքս ալ ցուցուցեր եմ իրեն. դուք ի՞նչպէս չվախցաք նո-
րա վրայ չարախօսութիւն ընելու. — Ընդէ՞ր ոչ երկերուք բամ-
բասել զճառայն իմ Մովսէս»: Մարիամ եւ Ահարոն այն սոսկալի
յանդիմանութիւնը լսելէն ետեւ դուրս ելան. ամպը վեր ելաւ.
Մարիամ ալ — որ կերեւնայ Թէ Ահարոնէն աւելի յանցաւոր ու
Թերեւս անոր գրգռողն էր — ձիւնի պէս բորոտեցաւ: Ահարոն
մեղայ ըսաւ Մովսէսի ու խնդրեց որ Թողութիւն տայ իրենց.
չգիտնալով ըրինք մեք այս մեղքը ըսաւ: Երբոր Մովսէս ալ Աս-
տուծմէ խնդրեց որ Մարիամու բժշկութիւն տայ, այս պատաս-
խանս լսեց. «Թէ որ իւր հայրը երեսը Թքած լինէր, պէտք չէ՞ր
որ ամօթէն եօծը օր աչքին չերեւնար. ուրեմն Թող բանակէն
դուրս ելնէ եօծը օր կենայ ու յետոյ գայ ներս»: Մարիամ ալ
այնպէս ըրաւ, ու եօծն օրուան ապաշխարանքը լմըննալէն
ետքը ժողովուրդը ճամբայ ելաւ ԱսերովԹ ըստած տեղէն
Փառանու անապատը երթալու:

Փառանու անապատէն Մովսէս Աստուծոյ հրամանովը Իսրայե-
լացւոց տասուերկու ցեղերէն մէկմէկ հոգի ընտրեց ու Քանա-
նացւոց երկիրը դրկեց որ երթան լրտեսեն դիտեն՝ աչքէ ան-
ցընեն, ու գան իրեն իմացընեն Թէ երկիրը ի՛նչպէս է, մէջի
մարդիկը շա՞տ են Թէ սակաւ, զօրաւո՞ր են Թէ տկար. քա-
ղաքները պարիսպ ունի՞ն Թէ չունին. բերքերը առա՞տ են Թէ
քիչ, ազնի՞ւ են Թէ անպիտան. նայեցէք որ երկրին պտուղ-
ներէն ալ առնուք հետերնիդ բերէք, ըսաւ:

Գնացին այն տասուերկու հոգին, քառասուն օր քալեցին,
բոլոր Քանանացւոց երկիրը աչքէ անցուցին, մէկ տեղէն ալ
որձի (ասմայի) ձիւղ մը կտրեցին՝ վրան մէկ կուզ խաղողով,
այնչափ մեծ որ պէտք եղաւ լծակով (սըրըխով) ուսերուն վրայ
առած բերել. անոր հետն ալ նուաւ եւ Թուզ: Եկան գտան Մով-

սէսն ու Ահարոնը՝ բոլոր ժողովրդով Կաղէս Բառնեայ ըսուած անապատին մէջ, պատմեցին նոցա իրենց տեսածները, եւ ցուցուցին բերած պտուղները. «Երկրին խօսք չունիմք ըսին. երկիր մը որ կամ ու մեղը կբըխեցընէ, եւ պտուղները ահա ասոնք են. բայց մէջի ազգերը շատ զօրաւոր մարդիկ են, քաղաքներն ալ ամուր, պարսպաւոր եւ ընդարձակ. ենակայ ազգն ալ տեսանք այն տեղ, այնպէս խոշոր եւ հսկայ մարդիկ որ մեք անոնց առջեւը մէկմէկ մարախի (չէքիրկէի) պէս բաներ էինք: Բոլոր երկրին հարաւային կողմը Ամաղեկացիք բռներ են, լեւներուն կողմը Քետացիք, Խեւացիք, Յեբուսացիք եւ Ամօրիացիք, ծովեզերքն ու Յորդանան գետին քովերն ալ Քանանացիք»: Քաղէք, որ այն տասուերկու լրտեսներէն մէկն էր, նայեցաւ որ այնպիսի խօսքերով իւր ընկերները ժողովրդեան աչքը պիտի վախցընեն, «Լուռ կեցէք» ըսաւ անոնց, ու դարձաւ Մովսեսի, «Այնպէս չէ, ըսաւ. պէտք է որ մեք համարձակ ելնեմք երթամք՝ այն երկրին տիրեմք, վասն զի կարող եմք այն ազգերուն յաղթելու»: Մէկալ լրտեսները խօսքը կտրեցին, «Ոչ, ըսին, պէտք չէ որ երթամք, վասն զի պիտի չկարենամք նոցա հետ գլուխ ելնել. նոքա մեզմէ շատ աւելի զօրաւոր են. այն երկիրը գնացողը հոն մեռնելու պիտի երթայ»: Ժողովուրդը այս որ լսեց, սարսափեցաւ. ամէնքը մէկ բերան ձայներնին ձգեցին, բոլոր գեղերը ողբ ու լաց ըրին. Մովսեսի եւ Ահարոնի դէմ ալ գանգատ ընելով կըսէին Թէ «Հազար անգամ լաւ էր որ եգիպտոսի մէջ մեռած լինէինք, կամ Թէ այս անապատին մէջ մեռնէինք, քան Թէ Աստուած առնու տանի զմեզ այն երկիրն որ պատերազմով ջարդուիմք, մեր կանայքն ու զակըններն ալ յափշտակուին՝ մեր Թշնամեաց ձեռքը իյնան: Անոր աղէկը՝ մեզի զօրավարներ ընտրեմք մէջերնէս ու դառնամք երթամք նորէն եգիպտոս»:

Մովսէս եւ Ահարոն այս որ լսեցին, երեսի վրայ ընկան ժողովրդեան առջեւն ու աղաչեցին որ ետ կենան այնպիսի աստուածընդդէմ խորհուրդներէ: Նմանապէս լրտեսներէն երկու հոգի, այսինքն Քաղէքն ու Յեսուն, ելան ըսին Իսրայելացւոց Թէ «Մեր տեսած երկիրը շատ պատուական երկիր է. բաւա-

կան է որ Աստուած ողորմի մեզի ու այն երկիրը պարզեւէ. երկիր մը որ կաթ ու մեղր կըրնէ ամէն կողմէն: Թէ ըո դուք Աստուծոյ դէմ չապստամբիք, այն երկրին բնակիչներէն վախնալու բան չունիք ամենեւին. վասն զի Աստուած ոչ թէ նոցա հետ, այլ մեր հետն է»: Ժողովուրդը նոցա ըսած ճշմարտութեանը մտիկ ընել չուզելով՝ ամէնքը մէկէն վազեցին քարեր առին որ քարկոծեն մեռցընեն զանոնք. բայց հրաշալի ամպը իջաւ իսկոյն խորանին վրայ ու զանոնք արգիլեց:

Աստուած ըսաւ Մովսէսի Թէ «Այդ ժողովուրդը մինչեւ ե՞րբ զիս պիտի բարկացընէ. մինչեւ ե՞րբ պիտի տեսնէ այնչափ հրաշքներն որ ըրի աչքին առջեւն ու չհաւատայ ինձի. Թող տուր, ջարդեմ մեռցընեմ բոլորն ալ, ու զքեզ անկէց մեծ ու զօրաւոր ազգի գլուխ ընեմ»: Մովսէս դարձեալ իրեն սրտին աղէկուածենէն ու ճշմարիտ ազգասիրութենէն շարժած՝ այնչափ աղաչեց պաղատեցաւ որ Աստուծոյ բարկութիւնը իջեցուց: «Ահա քու սիրոյդ համար կներեմ, ըսաւ Աստուած, այդ ժողովուրդեան. բայց իմ փառացս վրայ երդում ընելու պէս կըսեմ քզի Թէ այդ մարդիկն որ իմ այսքան ըրած հրաշքներս տեսան եգիպտոս եւ այս անապատին մէջ, եւ տասներորդ անգամն է որ զիս կփորձեն ու հրամաններս չեն կատարեր, ամէնքն ալ զուրկ պիտի մնան այն երկիրը տեսնելէն որ իրենց հայրերուն խոստացեր եմ. հապա դոցա որդիքն որ դեռ բարին ու չարը չեն ճանչնար՝ նոցա պիտի տամ այն երկիրը: Միայն Քաղէբ եւ Յեսու, որ իմ փառքս պաշտպանեցին դոցա անզգամութեանը դէմ, նոքա պիտի մտնեն այն երկիրը. իսկ մէկալներուն ամենուն ալ ոսկորները այս անապատիս մէջ պիտի իյնան, եւ նոցա որդիքն որ իրենց Թշնամեացը ձեռքը չմատնուինք ըսելով՝ կվախնան, քառասուն օրուան մէջ ընելու ճամբան քառասուն տարի ընեն. այս տեղուանքը մոլորելով պտըտին, եւ յետոյ մտնեն Քանանացոց երկիրը»:

Մովսէս ելաւ պատմեց ժողովուրդեան Աստուծոյ ամէն ըսածները, եւ ամէնքն ալ մեծ սուգի ու տրտմութեան մէջ ընկղմեցան. «Մեղա՛յ, գէշ ըրինք, ըսին. երթամք Աստուծոյ մեզի ցուցուցած երկիրը»: Բայց Մովսէս արգիլեց. «Մի՛ երթաք, վասն զի

Աստուած ձեր հետը չէ» ըսաւ: Նոքա մտիկ չըրին, լեռան վրայ ելան որ դիմացն անցնին: Ամաղէկացիքն ու Գանանացիքն ալ որ այն լեռները բնակած էին՝ յարձըկեցան Նոցա վրայ, զարկին շարդեցին, ու մնացածը քշեցին հալածեցին մինչեւ իրենց բանակը, ուր որ վկայութեան խորանն ու Մովսէս իրեններովը անշարժ կեցեր էին:

Իսկ այն վատ ու չարախօս լրտեսները, բաց իՔաղեբէն ու Յեսուէն, ամէնքն ալ չարաչար հարուածներով պատժուեցան Աստուծոյ ու մեռան, եւ ահաւոր օրինակ են մինչեւ ցայժմ այն մարդկանց որ իրենց չար խրատներովը կամ գայթակղական օրինակներովը պատճառ կլինին ուրիշներուն աստուածպաշտութենէ պաղելու, առաքինութեան ճամբէն ետ կենալու, եւ Աստուծոյ պատուիրանները ոտքի տակ առնելու: Մանաւանդ աւելի պիտի սարսափին իրենց կոչմանը անարժան աշխարհասէր ու մարմնապաշտ եկեղեցականները, որ պարտական են աւելի աղէկ լինելու. հոգեւորական կենաց, եւ անոր քաղցրութեան համը գիտնալով՝ զամէնքը յորդոցելու որ անվախ աներկիւղ առաջ երթան արքայութեան ճանապարհին մէջ:

Իսրայելացիք անապատին մէջ քառասուն տարի մոլորելու պատիժն որ առին Աստուծոյ, պէտք չէ՞ր հասկընային թէ մէկ ապաշխարութիւն մի է այն որ մեծ խրատ պիտի լինի իրենց, պէտք չէ՞ր զգաստանային ու Աստուծոյ բարկութիւնը իջեցընելու համար՝ նորա օրէնքներն ու պատուիրանները պահպանելու փոյթ ունենային: Նոքա ընդ հակառակն՝ անդադար կմոռնային Աստուծոյ հրամաններն ու իրենց ըրած աղէկութիւնները եւ տուած պատիժները. անտարակոյս շատը՝ բնական պատճառներ մեկնութիւններ կուտային իրենց տեսած ամէն հրաշքերուն ալ, ու ամենեւին հոգերնին չէր լիներ:

Զեւիի ցեղէն Կորիս անունով մէկը, Ռուբենի ցեղէն ալ Գաթան եւ Աբիրոն, եւս եւ Աւնան, ոտք հանեցին ժողովուրդը Մովսէսի եւ Ահարոնի դէմ, որպէս զի իրենք տիրապետեն Իսրայելացւոց վրայ. եւ գուցէ յոյս ալ տուին Նոցա որ կարճ ճամբով՝ քիչ ժամանակէն կրնան իրենք տանիլ հասցընել ժողովուրդը Քանանացւոց երկիրը: Նոցա հետ միացան ժողովուր-

դեան գլխաւորներէն ու պատուաւորներէն ալ երկու հարիւր յիսուն հոգի, Մովսեսի եւ Ահարոնի գլուխը ժողովուեցան ու ըսին. «Բաւական եղաւ ձեր այսքան հպարտութիւնը՝ որով տիրապետեր էք մեր վրայ. ի՞նչ է այս ժողովրդեան յանցանքն որ խստութեամբ կվարուիք հետը: Նոցա տէրը Աստուած է. դուք ինչո՞ւ այդչափ գոռոզացեր էք. — Ընդէ՞ր ֆոխացեալ էք ի վերայ ժողովրդեան Տեառն»: Մովսէս երեսի վրայ ընկաւ Կորխայ եւ անոր քովիներուն առջեւն ու ըսաւ թէ «եղբարք, Աստուած ինքը իւր կամօքը զո՞վ որ ընտրեց՝ քովն առաւ, չընտրածը հեռու բռնեց. մեր յանցանքը ի՞նչ է: Այդպէս չըլինիր. Թող ամէն մարդ վաղուան օրը իւր բուրվառը առնու՛ վկայութեան խորանին առջեւը գայ խունկ մատուցանելու. Աստուած յայտնի կընէ թէ իւր ընտրած անձինքը որո՞նք են, եւ որո՞ց պահեր է քահանայական պաշտօնը»:

Այն խօսակցութեան ատենը Դաթան եւ Աբիրոն հոն չէին. կերեւնայ թէ նոքա առանձին գրգռեր էին ժողովուրդը, եւ այնչափ հպարտացեր էին որ Մովսեսի եւ Ահարոնի հետ տեսնուիլն ալ ծանր էր իրենց: Մովսէս մարդ դրկեց, զանոնք ալ կանչեց: Պատասխան դրկեցին թէ «Մեք չեմք գար. — բաւական չեղա՞ւ քեզի որ առիւր հանեցիր զմեզ եգիպտոսի պէս երկրէն որ կաթ ու մեղր կբերէր, ու այս անապատը բերիր մեռցնելու համար. հիմա մեզի իշխանաբար հրամաններ՝ ալ կուտաս. թէ որ մեր անքերը փորես հանես, քովդ չեմք գար. — եթէ զաչս մեր բրեսցես, ոչ եկեսցուք առ քեզ»: Մովսէս այս որ լսեց, շատ ծանր եկաւ իրեն. դարձաւ ըսաւ Աստուծոյ թէ «Տէր, այն մարդկանց զոհերը մի՛ ընդունիր, վասն զի ապերախտ ու չարասիրտ են. մէկուն մէկ բանը առած չեմ, մէկուն վնաս մը տուած չեմ, ու այսպէս կվարուին ինձ հետ»:

Երկրորդ առաւօտը երբոր Մովսէս եւ Ահարոն իրենց բուրվառներովը, Կորխ ու իւր մարդիկներն ալ իրենց բուրվառներովը ժողովուեցան վկայութեան խորանին դուռը, Աստուծոյ փառքը երեւցաւ ամպեղէն սիւնէն բոլոր ժողովրդեան առջեւը: Հրամայեց Աստուած Մովսեսի որ ինքն ու Ահարոնը ժողովրդեան մէջէն մէկդի ելնեն. զամէնքը մէկէն շարդեմ վերցընեմ

ըսաւ: «Տէր Աստուած, արարիչ հոգւոց եւ մարմնոց» ըսելով աղաղակեցին երկուքը մէկէն. մեղքի տէրը մէկ մարդ մըն է միայն, միւր է բոլոր ժողովուրդը պիտի պատժես»: Աստուած ըսաւ թէ «Ձատուեցէք բաժնուեցէք Կորխայ, Դաթանայ եւ Աքիրոնի ժողովրդէն». Մովսէս ալ ապսպրեց ամենուն որ գատուին հեռանան այն ապստամբներուն քովէն: Դաթան եւ Աքիրոն ալ ելան կայնեցան յանդգնութեամբ իրենց վրաններուն առջեւը՝ իրենց բոլոր ընտանեօքն ու ստացուածքովը:

Մովսէս ըսաւ ժողովրդեան որ «եթէ այդ մարդիկը սովորական մահով մեռնին, նշան լինի ձեզ որ զիս ձեզ դրկողը Աստուած չէ. բայց թէ որ Աստուած այնպէս ընէ որ գետինը բացուի ու կուլ տայ զիրենք՝ իրենց ամէն բաներովը, հասկընաք որ այդ մարդիկը Աստուծոյ բարկութիւնը իրենց վրայ շարժեցին»: Խօսքը դեռ Մովսէսի բերանն էր, ահագին դողդամբ գետինը պատուեցաւ, ու Կորխ, Դաթան եւ Աքիրոն իրենց վրաններովը, ընտանեօքը, անասուններովն ու ամէն բաներովը ողջ ողջ թաղուեցան անյայտ եղան: Չորս դին կեցող ժողովուրդը սարսափած՝ ձգեցին փախան այն տեղէն, վախնալով որ մի՛ գուցէ իրենք ալ այն փորձանքին հանդիպին. բայց այն երկուհարիւր յիսուն հոգին որ խունկ կծխէին՝ կրակ ելաւ խորանէն զանոնք ալ այրեց մոխիր դարձուց:

Աստուած ապսպրեց Մովսէսի, ու Ահարոնի եղիազար որդւոյն՝ որ քահանայ էր, որ այն այրուած մարդկանց բուրվառներուն պղինձը առնուն ու ողջակիզաց սեղանին վրայ անցընեն, եւ անով Կորխայ ապստամբութեանն ու պատժոյն յիշատակը չըմոռցուի, եւ ամէն մարդ զգուշանայ այնուհետեւ իրեն չընկած պաշտօնին խառնուելէն, աշխարհականը քահանայական պաշտօն առնելէն, եւ եկեղեցական ու կրօնի վէճեր բանալէ:

Քահանայութիւնը այնպիսի բարձր աստիճան է որ անարժանութեամբ եւ առանց աստուածային կոչման, կամ թէ անարգ շահու եւ փառասիրութեան համար քահանայ լինել ուզողը պէտք է որ իւր խղճմտանքին կրակովը այրի տոջօրի նաեւ այս աշխարհիս վրայ՝ այն 250 ապստամբներուն պէս: Եւ երբոր աշխարհականներէն կամ ստորին դասու եկեղեցականներէն

մէկն ալ ընդդէմ օրինաւոր իշխանութեան ապստամբի գոռոզութեամբ, եւ ժողովրդեան մէջ գայթակղութիւն ձգէ, մեծամեծ պատիժներու պէտք է սպասէ՛ Կորխայ, Իաթանայ եւ Աբիրոնի պէս:

Քայց չափազանց սաստիկ չէ՞ր արդեօք՝ այն մարդկանց յանցանքին նայելով՝ նոցա տրուած պատիժը: — Այդպէս կարծեցին այն ժամանակն ալ Իսրայելացիք. ուստի երկրորդ օրը Մովսեսի եւ Ահարոնի վրայ թափեցան բարկութեամբ ու սկսան զայրանալով կանչուըռտել թէ «Այնչափ անմեղ մարդիկը ի՞նչ բերէին ձեզի որ ջարդեցիք զանոնք»: Մովսէս եւ Ահարոն հազիւ ազատեցան նոցա կատաղութենէն ու իրենք զիրենք վկայութեան խորանը ձգեցին. ամպը իջաւ ծածկեց զանոնք, եւ Աստուծոյ փառքը երեւցաւ ահաւոր կերպով մը: «Ելէք այդ ժողովրդեան մէջէն, ըսաւ Աստուած Մովսեսի եւ Ահարոնի, եւ ամէնքը մէկէն զարնեմ մեռցընեմ:» Մովսեսի եւ Ահարոնի բերանը խօսք չէր մնացած. երեսի վրայ ընկան մնացին: Յետոյ Ահարոն Մովսեսի հրամանովը բուրվառը ձեռքն առաւ, սեղանոյն վրայի սրբազան ըտուած կրակէն ու խունկերէն դրաւ մէջը, ու արտորալով գնաց բանակն որ ժողովրդեան մեղքին քառութիւն խնդրէ Աստուծմէ. վասն զի Աստուծոյ բարկութենէն՝ ժողովրդեան մէջ ջարդը սկսեր էր: Ահարոն բուրվառը ձեռքը կանգնեցաւ կեցաւ մեռելոց ու կենդանեաց մէջտեղը, եւ ջարդը դադրեցաւ: Այն օրը յանկարծակն մահի հանդիպողները տասնըջորս հազար եօթըհարիւր հոգի եղան, թող Կորխայ պատճառաւը մեռնողները:

Երբոր Ահարոն դարձաւ վկայութեան խորանը, Մովսէս Աստուծոյ հրամանովը Իսրայելացւոց ամէն ցեղերէն մէկմէկ գաւազան առաւ, վրաները անուննին գրեց, Ահարոնի գաւազանն ալ անոնց հետ մէկտեղ՝ դրաւ վկայութեան խորանը: Երկրորդ օրը Մովսէս եւ Ահարոն ներս մտան, տեսան որ Ահարոնի գաւազանը կանաչցեր ծլեր է եւ ընկոյզ տուեր է: Հանեց Մովսէս՝ տուաւ ամենուն իրենց գաւազաններն ու Ահարոնինը ցուցուց որ ծաղկեր էր: Այն ատեն ըսաւ Աստուած Մովսեսի թէ «Այդ Ահարոնի գաւազանը առ, վկայութեան խորանին մէջ պահէ որ

յիշատակ լինի այդ անհնազանդ ժողովրդեան առջեւը. տեսնեն ի՛նչպէս իմ կամքս է որ Ահարոնի ցեղէն միայն լինին առջեւս քահանայութիւն ընողները, եւ դադրին տրանջալէն ու տժգոհյալէն» :

Իսրայելացիք երբոր տեսան այս սոսկալի պատիժներուն իրարու ետեւէ իրենց վրայ գալը, յուսահատութեամբ խոնարհած եւ ահով դողով շփոթած՝ գնացին ըսին Մովսեսի թէ «Մեր վերջը ո՞ւր պիտի երթայ. ահաւասիկ ջարդուելով կոտորուելով մեռնելով կորանք գնացինք. վկայութեան խորանին մօտեցողը իսկոյն մեռնելու վրայ է. մինչեւ ե՛րբ այս խեղճութիւնը պիտի քաշեմք» : Մովսէս խղճաց ժողովրդեան վրայ, եւ երեսներուն չգարկաւ, չըսաւ թէ «Ձեր խեղճութեանը պատճառը դուք էք» . վասն զի իրենք ալ գիտէին, ու Մովսեսէն քաջալերութիւն լսելու համար եկեր իրեն այն գանգատը կընէին :

Այսպէս ահա եկեղեցին միշտ գեթութեամբ կընդունի իր մեղաւոր գաւակաց դարձն ու զղջումը, եւ յանցանքնին երեսներուն չգարներ :



76

0023390

2013

